ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«01» 08 2014թ.
ԷԳ-124

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Կից Ձեզ եմ ներկայացնում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի՝ «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ զինված ուժերում» թեմայով զեկույցի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության դիտարկումները:

Միաժամանակ կից ներկայացվում է նաև ՀՀ ՊՆ քննչական ծառայության դիտողությունները առանձին՝ հաշվի առնելով այս ստորաբաժանման կարգավիճակի փոփոխման գործընթացը:

Առդիր՝ 16 թերթ:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ առաջին տեղակալի վարչական ապարատի ղեկավար
քծի 1-ին դասի խորհրդական

Դ. ԲԵՆԳԼՅԱՆ

Կատ.՝ Մ.Հակոբյան
Հեռ.՝ +374 234445

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374) 10 29-44-01, Ֆաքս (+374) 10 29-43-12

ՀՀ ՊՆ կարծիքը
«Մարդու իրավունքների վիճակը ՀՀ զինված ուժերում» թեմայով զեկույցի վերաբերյալ

«2013թ. ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած զորակոչիկների և զինծառայողների գործերի վերաբերյալ տվյալները և բացահայտված խնդիրները» բաժին

Ա. Կազմակերպություն դիմած 9 սպայից 8-ի խնդիրը կապված է իրենց կողմից զբաղեցրած պաշտոնից վաղաժամկետ պահեստազոր արձակվելու նպատակով իրավական ընթացակարգերին ծանոթանալու և իրավական աջակցություն ստանալու հարցով: Իրավական աջակցություն ստանալը պայմանավորված է եղել վաղաժամկետ արձակման վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետները և ընթացակարգերը վերադաս հրամանատարության և ՊՆ կողմից չպահպանելու հետ:

Նշված 9 սպաների իրավական աջակցության արդյունքում 7-ի խնդիրը լուծվել է և նրանց բոլորի վերաբերյալ կայացվել է պահեստազոր արձակվելու մասին որոշում: 2 սպայի գործը դեռևս գտնվում է ընթացքում:

ՈՒսման ծախսերը փոխհատուցելու պայմանով ՀՀ զինված ուժերի պահեստազոր արձակվելու խնդրանքով կազմակերպություն են դիմել 9 սպաներ, որոնցից 8-ը 20132014թթ. ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամաններով արձակվել են ՀՀ ԶՈՒ պահեստազոր:

Մեկ սպան հանդիսանում է ՀՀ ՊՆ 95532 զորամասի մոտոհրաձգային դասակի հրամանատար կապիտան Արտավազդ Սուրենի Գևորգյանը, որը 2013թ. ծառայել է ՀՀ ՊՆ 54574 զորամասում (ԱՄՀԳ, Նուբարաշեն) և տեղեկանալով, որ ենթարկվելու է պլանային տեղափոխման 1ին կամ 2րդ կարգի զորամաս, զեկուցագիր է ներկայացրել ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու պայմանով ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակվելու խնդրանքով: ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի հրամանով սպան տեղափոխվել է ՀՀ ՊՆ 70179 զորամաս, որից հետո հրավիրվել է ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչություն՝ փոխհատուցման ենթակա

գումարին ծանոթանալու նպատակով, և քանի որ հնարավորություն չի ունեցել փոխհատուցելու նշված գումարը, հրաժարվել է պահեստազոր արձակվելուց: Այնուհետև, հաշվի առնելով սպայի ընտանեկան պայմանները (ծնողների առողջական խնդիրները), ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարությամբ նա տեղափոխվել է հետագա ծառայության ՀՀ ՊՆ 95532 զորամաս (ԽՈՒԲր, Երևան), ինչի մասին գրավոր հայտնվել է պարոն Ա.Սաքունցին:

Բ. Կազմակերպություն դիմած 1 նախկին սպայի խնդիրը վերաբերել է աշխատանքային ստաժի հաշվարկին:

Կազմակերպություն դիմել է ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության տրամադրության տակից ՀՀ զինված ուժերի պահեստազոր արձակված (ՀՀ ՊՆ 40133 զորամասի նախկին հրամանատար) փոխգնդապետ Արայիկ Ալբերտի Մադաթյանը՝ ՀՀ զինված ուժերում ծառայության ստաժը վերահաշվարկելու խնդրանքով, պատճառաբանելով, որ արձակման հրամանում ծառայության ստաժը հաշվարկած է սխալ: Բավարար հիմքերի բացակայության պատճառով դիմումը մերժվել է:

Հավելված 1. Տեղեկանքում բարձրացված հիմնական խնդիրների մասով

Խնդիր 5. *Առաջին և երկրորդ կարգի զորամասերում ծառայող սպաները ակադեմիայում կամ օրդինատուրայում կրթություն ստանալու համար չունեն առավելություն թիկունքային զորամասերում ծառայող սպաների նկատմամբ:*

Արտասահմանյան երկրների ռազմական ակադեմիաներ ընդունվելու ցանկություն հայտնած և ընդունելության ցուցակներում ընդգրկված թեկնածու-սպաները, նախքան ընդունելության քննություններին մասնակցելը, պարտադիր հրավիրվում են հարցազրույցի ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի մոտ, ինչի արդյունքում քննություններին մասնակցելու նախապատվությունը տրվում է միայն 1-ին և 2-րդ կարգի զորամասերում երկար տարիներ ծառայած սպաներին:

Ինչ վերաբերվում է կլինիկական օրդինատուրա բժիշկ-սպաների ընդունելությանը, ապա, համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 2013թ. հունիսի 17-ի N 679 հրամանի, կլինիկական օրդինատուրայի մրցույթին մասնակցելու թույլատրվում են ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող այն բժիշկ-սպաները, ովքեր 1-ին և 2-րդ կարգի զորամասերում բժշկական ծառայության պաշտոններում ծառայել են երեք տարուց ոչ պակաս, կամ 3-րդ կարգի զորամասերում՝ չորս տարուց ոչ պակաս:

Նախատեսված է կլինիկական օրդինատուրա ընդունվելու համար դիմելու իրավունքը սահմանել ըստ զինված ուժերում ծառայության տարիների.

-միայն 1-ին կարգի զորամասերում՝ նվազագույնը 3 տարի,

-1-ին և 2-րդ կարգի զորամասերում՝ ընդհանուրը 4 տարի,

-1-ին և 3-րդ կարգի զորամասերում՝ ընդհանուրը 4 տարի, եթե 1-ին կարգում՝ նվազագույնը 2 տարի է,

-2-րդ և 3-րդ կարգի զորամասերում՝ ընդհանուրը 4 տարի, եթե 2-րդ կարգում՝ նվազագույնը 3 տարի է,

3-րդ կարգի զորամասերում՝ նվազագույնը 5 տարի:

Ինչպես նաև ընդունելության մրցույթի ընթացքում մասնագիտական քննության հավասար արդյունքների դեպքում նախապատվությունը տալ գնահատման բալային համակարգում առավելագույն ցուցանիշներ (ՌՈՒՀ-ի ավարտական գնահատականներ, ծառայությունը զորամասերում ըստ կարգերի, խրախուսանքները, տույժերը, 'Լավագույն բուժծառայություն' և 'Վատագույն բուժծառայություն' մրցույթի արդյունքները, բուժական պրակտիկայի գնահատականն ըստ տրված բնութագրի)ունեցող սպաներին:

Խնդիր 6. *Իրականացվում են կադրային ոչ հետևողական և ժամանակին փոփոխություններ, ինչպես նաև պաշտոնի նշանակումներ առանց անձի համաձայնության:*

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 2010թ. դեկտեմբերի 14-ի N 0237 հրամանով գործողության դրված ՀՀ զինված ուժերում սպայական կազմի պլանային փոխարինման կարգի 10-րդ կետի՝ պլանային փոխարինման կարգով 1-ին

կամ 2-րդ կարգի զորամասեր սպային նշանակում են՝ առանց նրա հետ համաձայնեցնելու:

1-ին կամ 2-րդ կարգի զորամասերում վերը նշված կարգով սահմանված ընդհանուր ժամանակահատվածը ծառայած սպաներին կրկին նույն կարգի զորամաս, ինչպես նաև ծառայության մեջ առաջխաղացման կարգով նշանակումներն իրականացվում են բացառապես սպաների գրավոր համաձայնությամբ:

«Զորակոչը և ծառայությունը կարգավորող օրենսդրական փոփոխությունները և իրավական կարգավորման խնդիրները» բաժին.

3րդ կետի 1-ին պարբերության վերաբերյալ.

Չի համապատասխանում:

ՀՀ պաշտպանության նախարարի N410 հրամանը հաստատվել է 08.04.2013թ.ին, գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում՝ 13.05.2013թին: Զորակոչը անցկացվել է հունիսի 11ից:

Այսինքն՝ 2013թ. գարնանային զորակոչի ժամանակ բոլոր զորակոչիկները փորձաքննվել են և զինվորական ծառայության մասին որոշումները կայացվել են 08.04.2013թ. N410 հրամանի համաձայն:

2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ պարբերությունների վերաբերյալ.

Չի համապատասխանում:

ՀՀ պաշտպանության նախարարի 2013թ. ապրիլի 8-ի N410 հրամանով, հստակեցվել է բուժհաստատությունների կողմից տրված եզրակացություններով զարակոչիկների պիտանելիության վերաբերյալ որոշում կայացնելը:

Զորակոչիկների պիտանելիության վերաբերյալ ճիշտ որոշում կայացնելու համար ներգրավված են հանրապետության բոլոր մարզերի, Երևան քաղաքի լավագույն բժիշկ մասնագետներն ու փորձագետները, հանրապետության առաջատար կլինիկաների և տարածքային պոլիկլինիկաների ողջ բուժ. անձնակազմը և այս առումով հսկայական աշխատանք և նյութական ու

ֆինանսական միջոցներ են հատկացվում զորակոչիկների բուժզննման, բուժփորձաքննության և բուժման աշխատանքների կազմակերպման համար:

Միաժամանակ նշված աշխատանքները գտնվում են ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի անմիջական հսկողության տակ, ինչպես նաև իրավապահ մարմինների ամենօրյա ուշադրության կենտրոնում և մտահոգությունը բոլորինս է:

Ինչ վերաբերվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) չափանիշներով ախտորոշումները 410 հրամանում հիվանդությունների դասակարգումը և ծանրության աստիճանները սահմանող չափանիշները պետք է համապատասխանեն ԱՀԿի մոտեցումներին, ապա նշված ՀՀ ՊՆ 4102013թ. հրամանը «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը» կազմելու ժամանակ հաշվի են առնվել նաև վերոնշյալ մոտեցումները:

6-րդ պարբերության վերաբերյալ.

Մի քանի հոդվածով սահմանափակում ունեցող զորակոչիկի պիտանիության աստիճանը հնարավոր չէ համակցել և տալ մեկ ընդհանուր եզրակացություն, քանի որ յուրաքանչյուր հիվանդություն տալիս է որոշակի սահմանափակում ծառայողական պարտականությունները կատարելիս, որն իրականացվում է զորամասի հրամանատարության և բուժ ծառայության պետի հսկողությամբ:

3-րդ կետի պարզաբանումը՝

(*Այսպիսով 410 հրամանը, փոխարինելով նախկին 175 հրամանին, չի համապատասխանում ԱՀԿ չափանիշներին և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի սկզբունքներին*):

Չի համապատասխանում, այնուամենայնիվ իրականացվում են աշխատանքներ գործող օրենքների, մասնավորապես «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով, իսկ զորակոչերի ընթացքում զորակոչիկների առողջական վիճակի պարզաբանման աշխատանքներում բացահայտված թերությունները արձանագրվում են և

անհրաժեշտությունը առաջանալու դեպքում կնեկայացվեն առաջարկություններ «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգում» համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

«Մարդու իրավունքների խախտումները զորակոչի ընթացքում» բաժին.

- *Զորակոչի կազմակերպման գործընթացի և նախազորակոչային տարիքի անձանց և զորակոչիկների փորձաքննության իրականացման խնդիրները:*

1-ին պարբերության վերաբերյալ.

Չի համապատասխանում.

Զինվորական հաշվառման և զորակոչի ենթակա բոլոր քաղաքացիները կցագրման և զորակոչի ժամանակ անցնում են բժշկական զննում տարածքային զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովներում, որտեղ 10.07.2008թ. N748Ն ՀՀ կառավարության «Նախազորակոչային ու զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների առողջական վիճակի գնահատման, բժշկական փորձաքննության անցկացման, բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը հաստատելու մասին» որոշման N2 հավելվածի պահանջների համաձայն անցնում են պարտադիր համալիր հետազոտություն: Իսկ բժշկական հանձնաժողովի բժիշկ մասնագետների կողմից հիվանդություններ հայտնաբերելու կամ զորակոչիկի (ծնողների) կողմից գանգատներ հայտնելու դեպքում զորակոչիկները ուղարկվում են ստացիոնար բուժ.հետազոտման, որի արդյունքներով որոշվում է զորակոչիկի պիտանիության հարցը:

2-րդ պարբերության վերաբերյալ.

Համապատասխանում է մասամբ.

Զորակոչի ընթացքում քաղաքացիների բոլոր դիմում բողոքները ուսումնասիրվում են և տրվում են համապատասխան պարզաբանումներ, կրկնակի ներկայացվում են Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը միայն այն զորակոչիկներին որոնք ներկայացնում են հիմնավոր փաստարկներ կամ նոր ի հայտ եկած բժշկական փաստաթղթեր:

3-րդ պարբերության վերաբերյալ.

Չի համապատասխանում.

Սկսած 2013թ. գարնանային զորակոչից բոլոր զորակոչիկներին և նրանց օրինական ներկայացուցիչներին դիմումներ ներկայացնելու կամ պահանջելու դեպքում տրամադրվում են բժշկական զննության արդյունքների պատճենները: ՀՀ զինվորական կոմիսարիատում նման բողոքներ չեն գրանցվել:

Ինչ վերաբերվում է բոլորին բժշկական փաստաթղթերը տրամադրելու հարցին, ապա այս խնդիրը տարածքային զինվորական կոմիսարիատներում կառաջացնի դժվարություններ պատճենահանող սարքեր և անհրաժեշտ պարագաներ չունենալու պատճառով:

4-րդ պարբերության վերաբերյալ.

Չի ընդունվում, քանի որ մի քանի հոդվածով սահմանափակում ունեցող զորակոչիկի պիտանիության աստիճանը հնարավոր չէ համակցել և տալ մեկ ընդհանուր եզրակացություն, քանի որ յուրաքանչյուր հիվանդություն տալիս է որոշակի սահմանափակում ծառայողական պարտականությունները կատարելիս, որը իրականացվում է զորամասի հրամանատարության և բուժ ծառայության պետի հսկողությամբ:

5-րդ պարբերության վերաբերյալ.

Չի համապատասխանում.

ՀՀ զինվորական կոմիսարիատում նման փաստեր չի արձանագրվել և մեզ հայտնի չէ թեկուզև մեկ դեպք որևիցէ պաշտոնատար անձի կողմից բուժզննություն անցկացնող բժշկական հասատություններին հրահանգ տալու, առավել ևս գրավոր հրահանգ իջեցնելու որպեսզի բուժզննության արդյունքներով բացահայտված առողջական խնդիրները առավել 'Մեղմ' ձևակերպվելու համար:

6-րդ պարբերության վերաբերյալ.

Չի համապատասխանում.

Նշված բժշկական հրամանը նախատեսում է նաև նմանատիպ դեպքեր: Մանսավորապես՝ զորակոչիկը հիվանդություն ունենալու դեպքում նրան տրվում է տարկետում բուժման կամ դինամիկ հսկողություն իրականացնելու համար: Հիվանդության բարդացում չնկատվելու դեպքում զորակոչիկը ճանաչվում է պիտանի և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության՝ առանց որևէ բուժում անցնելու:

7-րդ պարբերության վերաբերյալ.

Չի համապատասխանում մասամբ.

Զորակոչիկների բուժզննության աշխատանքները դիտարկվում է որպես համապետական նշանակություն ունեցող միջոցառում և գտնվում է կառավարության անմիջական հսկաղության ներքո: Ինչ վերաբերվում է բուժ.հաստատություններում հերթեր և կուտակումներ առաջանալու խնդիրներին, ապա նշված ուղղությամբհամապատասխան բուժհաստատությունում իրականացվում են համապատասխան աշխատանքներ:

Եզրակացության վերաբերյալ

(*Նշված խնդրի լուծման վերաբերյալ կազմակերպությունը առաջարկել է կազմել բուժզննության իրականացման ժամանակացույց, որը մինչև այժմ չի իրականացվում*):

Կազմակերպության կողմից բոլոր դիտողությունները և առաջարկությունները վերցված են ի գիտություն և մշտապես տարվում են աշխատանքներ արձանագրված թերությունները և բացթողումները բացառելու ուղղությամբ:

«Զինված ուժերում մահվան դեպքերը» բաժին.

<u>**«Առաջարկություններ» բաժնի «Զորակոչի վերաբերյալ»** ենթագլուխ</u>

1-ին կետի վերաբերյալ.

Չի ընդունվում.

ՀՀ պաշտպանության նախարարի 08.04.2013թ. N410 հրամանը օրենքով փոխելու անհրաժեշտությունը գտնում ենք ոչ նպատակահարմար, քանի որ այն իրենից ներկայացնում է բժշկական փաստաթուղթ, և չափորոշիչների փոփոխությունների դեպքում հնարավոր չէ արագ արձագանքել և կատարել անհրաժեշտ փոփոխությունները:

2-րդ կետի վերաբերյալ.

Այդ ուղղությամբ կատարվում են համապատասխան աշխատանքներ:

3-րդ կետի վերաբերյալ.

Չի ընդունվում

Զորակոչիկների զինվորական ծառայության պիտանելիության հարցը կարգավորվում է 08.04.2013թ. N410 հրամանի՝ «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը» պահանջների համաձայն: